ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՎԵՏԻՍ ՓԱՓԱՋՅԱՆ

ՄԱՍՆԱԳՈՐԾՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

1876–2000

Մեկենասությամբ
Արմեն և Բերսաբե Ճերեճեան Հիմնադրամի
ԱՄՆ

This Publication was made possible by
Armen and Bersabe Jerejian Foundation Inc.
USA

❖

Հեղինակը իր խորին երախտագիտությունն է
Հայտնում Հարգարժան մեկենասին՝
«Արմեն և Բերսաբե Ճերեճեան Հիմնադրամի»
Պրեզիդենտ
Արսեն Ճերեճեանին

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՎԵՏԻՍ ՓԱՓԱՋՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ
(1876-2000 թթ.)

Ա II 859-96

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՒՆԱՀԱՎԱՔԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ԵՐԵՎԱՆ 2000

947.925 „1876„

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

AVETIS PAPAZYAN

CHRONOLOGY
THE ARMENIAN QUESTION AND THE GENOCIDE
(1876-2000)

Yerevan — 2000

●

Տպագրվում է Հայաստանի գիտությունների
ազգային ակադեմիայի Արևելագիտության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

ԴՏՀ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Փ 311

Փափազյան Ա.
Փ 311 Ժամանակագրություն: Հայկական հարցը և Մեծ եղեռնը. (1876-2000 թթ.):– Եր.:, «Զանգակ–97», 2000. – 48 էջ:

Ավետիս Փափազյանի աշխատասիրությամբ կազմված սույն ժամանակագրությունը որոշակի դաղափար և պատկերացում է տալիս Հայկական հարցի և Մեծ եղեռնի շուրջ ծավալված գեղքերի և ժամանակի փաստագրական իրադարձությունների մասին:
Նախատեսված է ընթերցող լայն հասարակության համար:

Փ 0503020913 / 0003(01)–2000 2000

ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 99930–2–096–6

© «Զանգակ–97», 2000
© Փափազյան Ա., 2000

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

2000 թվական, ապրիլ 24:

Լրացավ Հայոց Մեծ եղեռնի 85-րդ տարելիցը:

85 տարի առաջ տեղի ունեցավ 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը, որի ցավերը մինչև այսօր մորմոքում են վերապրողներին և նրանց ժառանգներին:

Այս օրերին Հայաստանում և Սփյուռքի բոլոր հայկական գաղթօջախներում տեղի են ունենում սգո և հոգեհանգիստ երեկոներ: Հայաստանի Հանրապետության ղեկավարները, հոգևոր առաջնորդները, օտարերկրյա դիվանագետները, հյուրերը Ծիծեռնակաբերդի բարձունքում մեկ րոպե լռությամբ կրկին գլուխ են խոնարհում հավերժական կրակի առջև:

Առ այսօր, մի շարք երկրների խորհրդարաններ և կառավարություններ պաշտոնապես ճանաչել և դատապարտել են հայերի ցեղասպանությունը:

Գոհունակությամբ պիտք է նշել նաև, որ ՀՀ Նախագահ՝ Ռոպերտ Քոչարյանը ՄԱԿ-ի նստաշրջաններում և պետական պաշտոնական հանդիպումներում ելույթ ունենալով, տևապես կոչ է ուղղում միջազգային հասարակությանը՝ ճանաչելու և դատապարտելու հայերի ցեղասպանությունը:

Հայկական հարցի ժամանակագրությունը սկսվում է 19-րդ դարի 70-ական թվականներից, սակայն նրա արծարծումը գոյություն է ունեցել ավելի վաղ, հանդիսանալով «Արևելյան հարցի» բաղկացուցիչ մասը:

19-րդ դարի վերջին քառորդին և 20-րդ դարի սկզբին արևմտահայության հետ առնչվող իրադարձությունների և ողբերգական դեպքերի շուրջ հայ և օտար լեզուներով լույս են տեսել բազմաթիվ ուսումնասիրություններ, փաստաթղթերի ժողովածուներ, մենագրություններ, ականատեսի վկայություններ, հուշագրություններ, որտեղ հավաստի և վավերագրական նյութերի հիման վրա լիովին պարզաբանվել են

իրական եղելությունները։

Հայկական հարցը և Մեծ եղեռնի փաստը այսօր էլ առավել բուռն թափով շարունակվում է մնալ համաշխարհային պատմագրության, միջազգային հասարակայնության և առանձին պետությունների ուշադրության կենտրոնում։ Այն յուրովի մեկնաբանություն է գտել նաև թուրքական պատմագրության և պետական գործիչների հակահայկական քաղաքականության շրջանակներում, ուր ամեն ջանք գործադրվում է քողարկելու այդ ողբերգական դեպքերը, աղավաղելու պատմական ճշմարտությունը և հատկապես հերքելու Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած հայերի հալածանքներն ու կոտորածները։

Մինչդեռ, ամբողջ աշխարհին հայտնի է, թե ինչպես արյունոտ սուլթան Աբդուլ Համիդը և հետագայում երիտթուրքերի կառավարությունը դաժան հալածանքների և կոտորածների միջոցով ձգտեցին լուծել հայկական հարցը Օսմանյան կայսրությունում, և ինչպես իրենց նենգ ու բարբարոսային քաղաքականությունը իրագործելու պատեհ առիթը հանդիսացավ Առաջին համաշխարհային պատերազմը...։

Իրականություն է նաև, որ Բեռլինի վեհաժողովից հետո, երբ Հայկական հարցը դարձավ եվրոպական տերությունների դիվանագիտական խարդախությունների շահագործման առարկա, այն ծանրագույն ողբերգական հետևանքներ ունեցավ թուրքական բռնապետության լծի տակ հեծող հայ ժողովրդի ճակատագրի համար։ Ինչպես ժողովրդական առածն է ասում՝ «Հոնքը սարքելու տեղ, աչքը հանեցին»։

Բոլոր դեպքերում պայքարը շարունակվում է։ Եվ հեռու չէ այն օրը, որ հայ ժողովրդի նկատմամբ կատարված բարբարոսային ցեղասպանությունը դատապարտվի միջազգային չափանիշով և արդար հատուցում ստանա նրա հողային պահանջատիրությունը։

Գիրքը նվիրվում է Մեծ Եղեռնի 85-րդ տարելիցին։

1876 թ.

Դեկտեմբեր,- Կ. Պոլսում հրավիրվեց եվրոպական մեծ տերությունների դեսպանախորհուրդը Օսմանյան կայսրության քրիստոնիա ազգաբնակչության վիճակը բարելավելու համար: Սակայն այն ձախողվեց «Սահմանադրություն» ազդարարող հրանոթների կեղծ համազարկի տակ:

1877 թ.

Ապրիլ 24,- Սկսվեց ռուս-թուրքական պատերազմը բալկաններում և պատմական Հայաստանի տարածքում, որն ավարտվեց Ռուսաստանի հաղթանակով:

1878 թ.

Մարտ 3,- Ռուսաստանի և Թուրքիայի միջև ստորագրվեց Սան-Ստեֆանոյի պայմանագիրը, որի 16-րդ հոդվածը վերաբերում էր Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու ծրագրին:

Մարտ 8,- Հայկական հարցը եվրոպական տերություններին ներկայացնելու և այնուհետև Բեռլինի վեհաժողովին մասնակցելու նպատակով Կ. Պոլսից մեկնեց հայ պատվիրակությունը Մ. Խրիմյանի գլխավորությամբ:

Հունիս 13-Հուլիս 13,- Տեղի ունեցավ Բեռլինի վեհաժողովը: 61-րդ հոդվածը վերաբերում էր Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում բարենորոգումներ անցկացնելու ծրագրին:

Օգոստոս,- Վանում ստեղծվեց «Սև խաչ» գաղտնի կազմակերպությունը:

1879 թ.

Օգոստոս,- Սուլթանական Թուրքիան սկսեց բացահայտորեն գործադրել իր հայահալած քաղաքականությունը:

1880 թ.

Օգոստոս 30,- Բարձրագույն դռան հրամանով արգիլվեց Հայաստան և հայրենասիրական անվանումների ու նկարների օգտագործումը:

Սեպտեմբեր 7,- Եվրոպական տերությունները համատեղ հուշագիր ներկայացրին Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունն: Մատնանշելով հայաբնակ վայրերում շարունակվող կեղեքումները, պահանջվում էր կյանքի կոչել բարենորոգումներ անցկացնելու ծրագիրը:

Արևմտահայերին օսմանյան ծանր լծից ազատագրելու նպատակով սկսվեց հայ ֆիդայական (հայդուկային) խմբերի կազմավորումը, որն ավելի աշխուժացավ 1894-96 թթ. կոտորածների ընթացքում և հետագայում:

1881 թ.

Մայիս,- Կարինում ստեղծվեց «Պաշտպան Հայրենյաց» գաղտնի կազմակերպությունը, ինչպես նաև «Զինակիր» խումբը:

1884 թ.

Հունիս,- Թուրքական հարկային կեղեքումների դեմ ապստամբություն բռնկվեց Զեյթունում:

1885 թ.

Վանում ստեղծվեց առաջին հայկական ազգային քաղաքական կուսակցությունը՝ «Արմենական կազմակերպությունը»:

1887 թ.

Ժնևում կազմակերպվեց Հնչակյան կուսակցությունը:

1889 թ.

Մայիս 21,- Ստեղծվեց «Իթթիհատ վե Թերաքքի» («Միություն և առաջադիմություն») նախնական անվանումը՝ «Օսմանյան միության կազմակերպություն» Թուրքական քաղաքական կուսակցությունը, որը Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում իրագործեց հայերի ցեղասպանությունը:

1890 թ.

Թիֆլիսում կազմակերպվեց Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը:

Հունիս 20,- Տեղի ունեցավ ընդհարում թուրքական զորքի և Կարինի անզեն հայ բնակչության միջև:

Հուլիս 19,- Կ. Պոլսում Հնչակյան կուսակցությունը կազմակերպեց «Գում-Գափու»ի ցույցը:

1891 թ.

Սուլթան Աբդուլ Համիդը հայերի ազգային ազատագրական պայքարը ճնշելու համար քյուրդ ցեղախմբերից կազմակերպեց «Համիդիե» անկանոն զորագնդերը:

1894 թ.

Օգոստոս 1,- Սկսվեց Սասունի հերոսական ինքնապաշտպանությունը: Տեղի ունեցան կոտորածներ թուրքական կանոնավոր բանակի և «Համիդիե» զորագնդերի կողմից:

1895 թ.

Հունվար 23,- Մեծ տերությունների Կ. Պոլսի դեսպանների պահանջով Սասուն ժամանեց թուրքական կառավարական քննիչ հանձնաժողովը հայերի կոտորածների հանցագործներին բացահայտելու համար:

Փետրվար 8,- Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Մատթեոս Իզմիրլյանը Թուրքիայի արդարադատության նախարար Ռըզա փաշային ուղղված ուղերձում (թաքրիր) մանրամասն տեղեկացնում է հայաբնակ վայրերում հայերի հանդեպ կատարվող հակաօրինական արարքների, կեղեքումների և սպանությունների մասին:

Մայիս 11,- Կ. Պոլսի՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանները հայկական բարենորոգումներ ներկայացնող նախագիծը ներկայացրին Բարձրագույն դուռ:

Սեպտեմբեր 30,- «Մայիսյան բարենորոգումների ծրագիրը» կյանքի կոչելու պահանջով Հնչակյան կուսակցությունը բողոքի ցույց կազմակերպեց Կ. Պոլսում (Պապը Ալիի ցույցը):

Հոկտեմբեր 5-նոյեմբեր 1,- Արևմտահայերի զանգվածային կոտորածներ Կ. Պոլսում և հայաբնակ վայրերում:

Հոկտեմբեր 12,- Ապստամբություն Զեյթունում։

1896 թ.

Հունիս 3,- Սկսվեց Վանի հերոսական ինքնապաշտպանությունը։

Օգոստոս 14,- Հայկական բարենորոգումներին եվրոպական տերությունների ուշադրությունը բևեռելու համար Դաշնակցություն կուսակցությունը կազմակերպեց Կ. Պոլսի «Բանկ Օթոմանի» գրավումը։

Օգոստոս,- Հայերի զանգվածային կոտորածներ Կ. Պոլսում։

1897 թ.

Հուլիս 25,- Դաշնակցություն կուսակցությունը կազմակերպեց Խանասորի արշավանքը։

1901 թ.

Նոյեմբեր 1-27,- Տեղի ունեցավ ազգային ազատագրական շարժման հերոս Անդրանիկի Զոկատի և թուրքական զորամասերի կռիվը Ս. Առաքելոց վանքում։

1902 թ.

Հուլիս 4-7,- Բրյուսելում տեղի ունեցավ միջազգային կոնֆերանս հայկական հարցի արդարացի լուծման համար։

1904 թ.

Փետրվար-մայիս,- Տեղի ունեցավ Սասունի հերոսական ինքնապաշտպանությունը։

1905 թ.

Հուլիս 21,- Դաշնակցություն կուսակցությունը մահափորձ նախաձեռնեց Սուլթան Աբդուլ Համիդի դեմ։

1906 թ.

Հայ հասարակական քաղաքական գործիչ Պողոս-Նուբար փաշայի նախաձեռնությամբ կահիրեում հիմնադրվեց Հայկական բարեգործական ընդհանուր միությունը։

1908 թ.

Հունիս 24,- Երիտթուրքերի հեղաշրջումը Օսմանյան

կայրություն։ Վերականգնվեց 1876 թ. «Սահմանադրությունը»։

1909 թ.

Մարտ 31-ապրիլ 13,- Ատանայի և շրջակա հայության կոտորածը։

1910 թ.

Ստեղծվեց «Հայ օգնության միությունը» դաշնակցական գործիչ Ակնունու (Խ. Մալումյան) նախաձեռնությամբ (նախնական անվանումները՝ «Դաշնակցության կարմիր խաչ», «Հայկական կարմիր խաչ»)։

1911 թ.

Փետրվար 14,- Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Հովհաննես Արշարունին Թուրքիայի արդարադատության նախարարին ուղղված ուղերձում (թաքրիր) տեղեկացնում է հայաբնակ գավառներում տեղի ունեցող թուրք պաշտոնատար անձանց անօրինական արարքների, հայերի սպանության և ունեցվածքի հափշտակման մասին։

1912 թ.

Հոկտեմբեր 9,- Սկսվեց բալկանյան պատերազմը, որին մասնակցեց Անդրանիկը իր ջոկատով։

Նոյեմբեր 10,- Կաթողիկոս Գևորգ 5-րդը հատուկ կոնտակով ստեղծեց «Ազգային պատվիրակություն» հանձնախումբը Պողոս-Նուբար փաշայի գլխավորությամբ։

1913 թ.

Հուլիս 3-24,- Քննարկվեց Կ. Պոլսի ռուսական դեսպանատան խորհրդական Ա. Մանդելշտամի խմբագրությամբ կազմված Արևմտյան Հայաստանի բարենորոգումներին վերաբերող նախագիծը։

1914 թ.

Փետրվար 8,- Մեծ տերությունների և Թուրքիայի կողմից ստորագրվեց հայկական բարենորոգումների ծրագիր։ Որպես կառավարիչներ Կ. Պոլիս ժամանեցին՝ Հոլանդացի

վեսթենենկը և նորվեկիացի Հոֆֆը։ Առաջին համաշխարհային պատերազմի ծագումով ծրագիրը մնաց թղթի վրա։

Հուլիս 23,- Ռուսական բանակի շարքերում, Արևմտյան Հայաստանը ազատագրելու նպատակով, նախաձեռնվում է կազմակերպել հայ կամավորական ջոկատներ։

Օգոստոս 1,- Սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը։

Հոկտեմբեր 20,- Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային։

1915 թ.

Սկզբներին,- Արևմտահայերին տեղահանելու և բնաջնջելու նպատակով տեղի ունեցավ «Իթթիհատ վե թերաքքի» («Միություն և առաջադիմություն») կուսակցության կենտրոնական կոմիտեի գաղտնի նիստը։

Դեկտեմբեր 16,- Թուրքական կառավարությունը չեղյալ հայտարարեց 1914 թ. փետրվարի 8-ին ստորագրած հայաբնակ նահանգներում բարենորոգման գործադրման ծրագիրը։

Ապրիլ 24 լույս 25-ի գիշերը,- Հայոց Մեծ եղեռնի սկիզբը։ Կ. Պոլսում 800 հայ մտավորականների ձերբակալումը, աքսորն ու սպանությունը։

Ապրիլ 26,- Կ. Պոլսի Հայոց Պատրիարք՝ Զավեն Արքեպիսկոպոսի կողմից հաջորդաբար Մեծ Վեզիր Սայիդ փաշային է ներկայացվում երկու ուղերձներ (թաքրիր), որտեղ, նկատի ունենալով արևմտահայության օրհասական ծանր կացությունը, նախազգուշացվում է միջոցներ ձեռնարկել կանխելու սպասվող ահավոր աղետը։

Հայերին տեղահանելու և կոտորելու նպատակով գաղտնապես ստեղծվեց «Թեշքիլաթ-ը մահսուսեն» (հատուկ կազմակերպություն)։ Այն գլխավորում էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ՝ դոկտ. Բեհաէդդին Շաքիրը։

Հայերի տեղահանության և կոտորածի գաղտնի

հրամանը չկատարելու համար պաշտոնազրկվեցին մի շարք թուրք գործիչներ. Անկարայի վալի (նահանգապետ) Մազհար բեյը, Քաստամունիի վալի Ռեշիդ փաշան, Ցոզղաթի նախկին մութասարրիֆ՝ (Սանջակի կառավարիչ) Ջեմալ բեյը, Բալուի մութասարրիֆի տեղակալ՝ Ալի Իլմի բեյը, Քյոթահիայի մութասարրիֆ՝ Ֆայիք Ալի բեյը, Գոնիայի և այնուհետև Հալեպի վալի՝ Ջելալ բեյը, Դիարբեքիրի վալիի երկու տեղակալները դատապարտվեցին մահվան, և այլն:

Ապրիլ և հետագա ամիսներին,- Ինքնապաշտպանության կռիվներ՝ Վանում, Շապին-Գարահիսարում, Զեյթունում, Մուսա Լեռում, Ուրֆայում, Հաջընում, Ցոզղաթում, Սասունում, Մուշում, Շատախում:

Մայիս 8,- Արամ Մանուկյանը նշանակվում է Վանի նահանգապետ:

Մայիս 21,- Թուրքական կառավարությունը հրապարակեց օրենք (3 կետերից) ռազմական գոտուց հայերի տեղահանության և պատժամիջոցների մասին:

Մայիս 24,- Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարությունները համատեղ հուշագիր ներկայացրին երիտթուրքերի կառավարության՝ անհապաղ դադարեցնելու հայերի կոտորածները Օսմանյան կայսրությունում:

Մայիս 26,- Թուրքական կառավարությունը որոշում ընդունեց հայերի լքյալ գույքերի մասին, բայց այն մնաց թղթի վրա:

Մայիս 30,- Թուրքական կառավարությունը հաստատեց արևմտահայերի նկատմամբ արդեն գործադրվող «Տեղահանության ժամանակավոր օրենքը»:

Մայիս 31,- Սուլթան Մեհմեդ Ռեշադի հրամանագրով Զեյթունը վերանվանվեց Սուլեյմանիե:

Հունիս 15,- Կ. Պոլսի «Սուլթան Պայազիտ»ի հրապարակում կախաղան բարձրացվեցին Հնչակյան կուսակցության 20 անվեհեր ղեկավար գործիչներ:

1916 թ.

Անողոքաբար շարունակվեց հայերի բնաջնջումն ու տեղահանությունը դեպի Սիրիայի անապատները։ Ամբողջ Օսմանյան կայսրությունում զոհ գնացին ավելի քան մեկուկես միլիոն անմեղ հայեր։ Արևմտյան Հայաստանը հայաթափվեց։ Մեծ Եղեռնի ընթացքում ավերվեցին և հողին հավասարվեցին 1629 վանքեր, եկեղեցիներ, մատուռներ։ Հրկիզվեցին հազարավոր մագաղաթյա հնագույն ձեռագրեր և պաշտամունքային մատյաններ։

Մարտ 6,- Անգլիայի և Ֆրանսիայի միջև տեղի ունեցավ «Սայքս-Փիքո»յի գաղտնի համաձայնագիրը՝ Օսմանյան կայսրության տարածքը բաժանելու մասին, որտեղ անտեսվեց Արևմտյան Հայաստանն ու հայկական հարցը։

Հոկտեմբեր 27,- Լոնդոնում համաձայնություն կնքվեց Հայկական լեգիոն (զորագունդ) ստեղծելու մասին։

1917 թ.

Նոյեմբեր 7,- Ռուսաստանում տեղի ունեցավ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը։

Դեկտեմբեր 29,- Խորհրդային Ռուսաստանի ժողկոմսովետը ընդունեց «Թուրքահայաստանի մասին դեկրետ»ը (վերականգնելու հայ ժողովրդի իրավունքները Արևմտյան Հայաստանում)։ Մնաց թղթի վրա։

1918 թ.

Փետրվար,- Սկսվեց թուրքական բանակի լայնածավալ հարձակումն ու առաջխաղացումը Հայաստանի տարածքի վրա։

Մարտ 3,- Ստորագրվեց Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը, ըստ որի Ռուսաստանը թուրքիային էր զիջում Արևելյան Հայաստանի որոշ մասը և Արևմտյան Հայաստանի ամբողջ տարածքը։

Մայիս 21-28,- Տեղի ունեցավ Սարդարապատի հերոսական ճակատամարտը։

Մայիս 23-29,- Տեղի ունեցան Բաշ-Աբարանի և Ղարաքիլիսեի (այժմ՝ Վանաձոր) հերոսամարտերը։

Մայիս 28,- Ազատ և անկախ Հայաստանի Հանրապետության հռչակումը։ Վարչապետ ընտրվեց Հովհաննես Քաջազնունին։

Հունիս 4,- Ստորագրվեց Բաթումի պայմանագիրը Օսմանյան կայսրության և նորաստեղծ Հայաստանի Հանրապետության միջև։ Այն Թուրքական կառավարության կողմից թելադրված ծանր պայմանագիր էր, որը կարճ ժամանակից հետո Հայաստանի Հանրապետությունը չեղյալ համարեց։

Սեպտեմբեր 19,- Հայկական լեգիոնը հաղթանակ տարավ Արարայի ճակատամարտում։

Հոկտեմբեր 30,- Ստորագրվեց Մուդրոսի զինադադարի պայմանագիրը։ Թուրքիայի պարտությունը Առաջին համաշխարհային պատերազմում։

Նոյեմբեր 4,- Կ. Պոլսում Ահմեդ Իզզեթ փաշայի դահլիճը որոշում կայացրեց Օսմանյան Կայսրությունը Առաջին համաշխարհային պատերազմի մեջ ներքաշելու և հայերի տեղահանությունն ու կոտորածը կազմակերպելու հանցանքով դատական պատասխանատվության ենթարկել երիտթուրքական կառավարության ղեկավարներին։

Այս թվականից սկսած մինչև 1923 թվականը թուրքերի կողմից զանգվածային նոր կոտորածներ տեղի ունեցան Կիլիկիայում, Արևելյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ այլ վայրերում։

<u>1919 թ.</u>

Մարտ 8,- Հրապարակվեց սուլթան Մեհմեդ 6-րդ Վահիդետինի կայսերական հրովարտակը՝ երիտթուրքական կառավարության ղեկավարներին և «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխներին դատելու մասին։

Ապրիլ 8,- Կ. Պոլսի Ռազմական արտակարգ ատյանը

հրապարակեց Ցոզղաթի հայության տեղահանության և կոտորածի հանցագործներին վերաբերող դատավճիռը։

Ապրիլ 11,- Ցոզղաթի հայությանը կոտորելու ծանր հանցանքով Կ. Պոլսի «Սուլթան Պայազիտ»ի հրապարակում կախաղան բարձրացվեց Ցոզղաթի մութասարրիֆի տեղակալ՝ Քեմալ բեյը։

Ապրիլ 27,- Կ. Պոլսում սկսվեց երիտթուրքական կառավարության ղեկավարների և «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների դատավարությունը։

Մայիս 2,- Հրապարակվեց Կ. Պոլսի Ռազմական արտակարգ ատյանի Բյույուք Դերեի (Ստամբուլի արվարձաններից) տեղահանության հանցագործներին վերաբերող դատավճիռը։

Մայիս 22,- Հրապարակվեց Կ. Պոլսի Ռազմական արտակարգ ատյանի Տրապիզոնի հայության տեղահանության և կոտորածի հանցագործներին վերաբերող դատավճիռը։

Մայիս,- «Մերձավոր արևելքի ամերիկյան օգնության կոմիտե»ն օգնություն է կազմակերպում հայ որբերին և չքավոր ընտանիքներին։

Հունիս 21,- Կ. Պոլսում սկսվեց «Միություն և առաջադիմություն» կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարների և այլ պաշտոնատար անձանց դատաքննության նիստերը։

Հուլիս 5,- Կ. Պոլսի Ռազմական արտակարգ ատյանի դատավճռով մահվան դատապարտվեցին Թալեաթը, Ջեմալը, Էնվերը, Դոկտ. Նազիմը։ Այլ դատավճիռներով մահվան դատապարտվեցին նաև Դոկտ. Բեհաէդդին Շաքիրը, Տրապիզոնի վալի Ջեմալ Ազմին, կուսակցության Տրապիզոնի պատասխանատու քարտուղար՝ Նայիլ բեյը։

<u>1920 թ.</u>

Հունվար 8,- Կ. Պոլսի Ռազմական արտակարգ ատյանը

հրապարակեց «Միություն և առաջադիմություն» կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարների հայերի տեղահանության և կոտորածին վերաբերող դատավճիռը։

Հունվար 13,- Կ. Պոլսի Ռազմական արտակարգ ատյանը հրապարակեց Խարբերդի հայերի տեղահանության և կոտորածի հանցագործներին վերաբերող դատավճիռը։

Ապրիլ,- Սկսվեց Այնթապի հայության հերոսական ինքնապաշտպանական կռիվները թուրք բռնակալների դեմ, որը շարունակվեց մինչև 1921 թ. փետրվարը։

Ապրիլ 19,- Սան-Ռեմոյում (Իտալիա) տեղի ունեցած Անտանտայի պետությունների խորհրդաժողովում առաջարկություն եղավ ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին ստանձնելու Հայաստանի մանդատը (հոգատարությունը)։

Օգոստոս 10,- Ստորագրվեց Սևրի (Փարիզի մոտակայքում) հաշտության պայմանագիրը Ավետիս Ահարոնյանի մասնակցությամբ։ 88-93 հոդվածներով Թուրքիան ճանաչում էր ազատ և անկախ Հայաստանի պետությունը։ ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի նախաձեռնությամբ ստեղծվելու էր մոտ 150 հազար քառ. կմ տարածքով Հայաստան մինչև Սև Ծովի ափերը։ Այն չվավերացվեց և չիրագործվեց կյանքում։

Հունիս 1,- ԱՄՆ-ի Ծերակույտը մերժեց նախագահ Վ. Վիլսոնի Հայաստանի վրա մանդատ հաստատելու առաջարկը։

Սեպտեմբեր 21,- Սկսվեց հայ-թուրքական պատերազմը։

Դեկտեմբեր 1,- Ադրբեջանի հեղափոխական խորհուրդը հայտարարեց, որ ճանաչում է Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը, Նախիջևանը որպես Հայաստանի բաղկացուցիչ մասեր։

Դեկտեմբեր 2,- Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումը։

Դեկտեմբեր 3,- Ստորագրվեց Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագիրը Հայաստանի և Թուրքիայի միջև։ Հայաստանը ունեցավ տարածքային ծանր կորուստներ։

1921 թ.

Փետրվար 1,- Լոնդոնում տեղի ունեցած խորհրդաժողովում Անգլիայի և Ֆրանսիայի կողմից օրակարգի հարց դարձավ Թուրքիայում «Հայկական ազգային օջախներ» ստեղծելու գաղափարը (հետագայում մնաց թղթի վրա)։

Մարտ 15,- Բեռլինում Սողոմոն Թեհլիրյանը ահաբեկեց Թուրքիայի ներքին գործերի նախարար՝ Թալեաթին։

Մարտ 16,- Մոսկվայում ստորագրվեց սովետա-թուրքական բարեկամության և եղբայրության պայմանագիրը։ Այն ուղղված էր Սևրի պայմանագրի դեմ։ Անտեսվեցին Հայաստանի շահերը, Թուրքիային զիջելով հայկական հողային տարածքներ (Կարսի նահանգը, Սուրմալիի և Նախիջևանի մարզերը և այլն)։

Հուլիս 5,- Ռուսաստանի Խորհրդային Համայնավար կուսակցության Կովկասյան բյուրոն Ստալինի նախաձեռնությամբ որոշում կայացրեց Լեռնային Ղարաբաղի տարածքը Ադրբեջանին հանձնելու մասին։

Հոկտեմբեր 1,- Կ. Պոլսում ստեղծվեց Ռամկավար ազատական կուսակցությունը։

Հոկտեմբեր 13,- Ստորագրվեց Կարսի պայմանագիրը մի կողմից քեմալական Թուրքիայի և Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի խորհրդային հանրապետությունների միջև։ Տեղի ունեցան սահմանային ճշտումներ։ Կազմավորվեց Նախիջևանի ինքնավար հանրապետությունը Ադրբեջանի գերիշխանության տակ։

Դեկտեմբեր 6,- Հռոմում Արշավիր Շիրակյանը ահաբեկեց Մեծ Վեզիր Սայիդ Հալիմ փաշային։

1922 թ.

Ապրիլ 17,- Բեռլինում Արամ Երկանյանը և Արշավիր Շիրակյանը ահաբեկեցին «Թեշքիլաթ-ը մահսուսե»ի նախագահ Բեհաէդդին Շաքիրին և Տրապիզոնի նախկին նահանգապետ՝ Ջեմալ Ազմիին։

Հուլիս 25,- Թիֆլիսում Պետրոս Տեր Պողոսյանը և Արտաշես Գևորգյանը Ահաբեկեցին ծովային նախարար՝ Ջեմալ փաշային։

Օգոստոս 4,- Թուրքմենիստանի առաջին Հիսարյան հատուկ հեծյալ բրիգադի հրամանատար Հակոբ Մելքումովի ձեռքով Զաղան Ղըշլաղում ահաբեկվեց Էնվերը։

Սեպտեմբեր 9,- Իզմիրում սկսվեց հայ և հույն բնակչության կոտորածը քեմալական կանոնավոր զորքի կողմից։

1923 թ.

Հուլիս 24,- Ստորագրվեց Լոզանի հաշտության պայմանագիրը։ Այն փոխարինեց Սևրի պայմանագրին, մոռացության տալով հայկական հարցը։

1924 թ.

Հուլիս 12,- Մեծ մարդասեր, նորվեգիացի գիտնական Ֆ. Նանսենի նախաձեռնությամբ Ազգերի լիգան որոշում կայացրեց «Նանսենյան» անձնագիր տրամադրել կոտորածից փրկված հայերին։

Ստեղծվեց Հայ Դատի հանձնախումբը։

1939 թ.

Օգոստոս,- Ֆաշիստական զորքերի (Օգոստոս 22) Լեհաստան ներխուժելու նախօրյակին Ա. Հիտլերը հայտարարեց. «Ո՞վ է վերջը, այսօր խոսում է հայերի ոչնչացման մասին»։

1945 թ.

Նոյեմբեր 29,- Կաթողիկոս Գևորգ 6-րդը դիմեց ԽՍՀՄ-ն, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կառավարություններին՝ Խորհրդային Հայաստանին միացնելու Թուրքիայի տարածքում գտնվող Արևմտյան Հայաստանի հողերը։

1947 թ.

Ապրիլ 30,- Նյու Յորքում տեղի ունեցավ հայկական համաշխարհային վեհաժողով, որտեղ քննարկվեցին հայերի հողային պահանջատիրությունը և դեպի հայրենիք ներգաղթ

II 25996

կազմակերպելու հարցերը։

1948 թ.

Դեկտեմբեր 9,- ՄԱԿ-ի գլխավոր ժողովը որոշում ընդունեց ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատիժներ սահմանելու, ինչպես նաև այն մասին, որ ցեղասպանությունը վաղեմության ժամկետ չունի։

1953 թ.

Մայիս 30,- ԽՍՀՄ-ի կառավարությունը պաշտոնապես հրաժարվեց Հայաստանին վերաբերող հողային պահանջատիրությունից։

1965 թ.

Ապրիլ 20,- Ուրուգվայի Արևելյան հանրապետության ծերակուտի և ներկայացուցիչների Պալատի միացյալ ժողովում ընդունվեց օրենք հայ նահատակների հիշատակի օրվա առթիվ։

Ապրիլ 24,- Աշխարհի մոտ 25 երկրներում նշվեց Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցը և հարգանքի տուրք մատուցվեց անմեղ զոհերի հիշատակին։

Էջմիածնի մայր տաճարի բակում կանգնեցվեց հուշարձան՝ «Խաչքար աղոթքի և ուխտի, ի հիշատակ 1915 թվականի չարագործության զոհ դարձած հայերի»։

Մեծ եղեռնի զոհերի հիշատակին հուշարձան կանգնեցվեց նաև Կալիֆորնիա նահանգի Մոնթեբելլո հայահոծ քաղաքում։

Հետագա տարիներին Հայաստանում և Աշխարհի հայաբնակ բոլոր վայրերում հիմնադրվեցին և բացումը կատարվեցին Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակին կառուցված հուշարձանների։

Հուլիս 15,- Հելսինքիում կայացած խաղաղության կողմնակիցների համաշխարհային վեհաժողովը դատապարտեց Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած 1915-ի ցեղասպանությունը։

1967 թ.

Նոյեմբեր 28,- Երևանում Ծիծեռնակաբերդի բարձունքի վրա բացվեց 1915 թ. Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան կոթողը:

1970 թ.

Սկզբներին,- Ստեղծվեց «Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակը»:

1972 թ.

Վաշինգտոնում ստեղծվեց Ամերիկայի հայկական համագումարը՝ հայկական հարցի և Մեծ եղեռնի հարցերի տեղեկատվության ու պաշտպանության կազմակերպություն:

1973 թ.

Ապրիլ 24,- Ֆրանսիայի Մարսել քաղաքում կանգնեցվեց հուշարձան 1915 թ. Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

1973 թ.

Հուլիս,- ՄԱԿ-ի ռասիզմի ու ցեղասպանության կանխման հանձնաժողովը քննարկեց 1915-ի հայոց Մեծ եղեռնը:

1974 թ.

Մարտ 6,- ՄԱԿ-ի Մարդու Իրավունքների Հանձնաժողովը քննարկումների ընթացքում 1915-ի Մեծ եղեռնը բնութագրեց որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն:

1975 թ.

Ապրիլ 8,- ԱՄՆ-ի Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի ընդունած բանաձևում ճանաչվեց հայերի ցեղասպանությունը:

Ապրիլ 24,- Հունաստանի մայրաքաղաք Աթենքում, Իտալիայի Միլան քաղաքում, ինչպես նաև Լիբանանի մայրաքաղաք Բեյրութի մոտակայքում գտնվող Բիգֆայա գյուղում տեղի ունեցան 1915 թ. Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանների բացումը:

1978 թ.

Ապրիլ 24,- Ֆրանսիայի Լիոն քաղաքում կանգնեցվեց

հուշարձան՝ Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

1984 թ.

Ապրիլ 13-16,- Փարիզում «Ժողովուրդների միջազգային ատյան»ի դումարած նիստերում դատապարտվեց հայերի ցեղասպանությունը և այն ընութագրվեց որպես միջազգային չափանիշի հանցագործություն:

Ապրիլ 24,- Փարիզի Ալֆորվիլի շրջանում կանգնեցվեց հուշարձան Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

1985 թ.

Հուլիս-Դեկտեմբեր,- ԱՄՆ-ի Կոնգրեսի Վերին Պալատ՝ Մերակույտում քննարկվեց հայերի ցեղասպանության հարցը:

Օգոստոս 27,- ՄԱԿ-ի Մարդու իրավունքների Հանձնաժողովը քննարկեց Հայոց Մեծ եղեռնի հարցը և ընդունեց դրական որոշում:

1987 թ.

Ապրիլ 24,- Գերմանիայի Շտուտգարտ քաղաքում կանգնեցվեց խաչքար հուշարձան՝ Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

Հունիս 18,- Ֆրանսիայի Ստրազբուրգ քաղաքում Եվրոպական խորհրդի ընդունած որոշման մեջ դատապարտվեց հայերի ցեղասպանությունը:

1988 թ.

Փետրվար 20,- ԼՂԻՄ-ի մարզային խորհուրդը որոշում ընդունեց դուրս գալ Ադրբեջանի կազմից և միանալ Հայաստանին:

Սկսվեց Արցախի ազատագրության պայքարը:

Փետրվար 27-29,- Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում կազմակերպվեց հայերի ջարդ և տեղահանություն:

Հունիս 15,- Հայաստանի ԽՍՀ-յան Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-յան կազմի մեջ ընդունելու վերաբերյալ:

Նոյեմբեր,- Հայերի ջարդեր տեղի ունեցան Բաքվում,

Կիրովապատում և հայաբնակ այլ վայրերում։

Դեկտեմբեր 7,- Հայաստանում տեղի ունեցավ մեծ աղետ։ Ահավոր երկրաշարժը ցնցեց հայոց աշխարհը։

1989 թ.

Ապրիլ 24,- Ավստրալիայի Սիդնեյ քաղաքում կանգնեցվեց հուշարձան Մեծ եղեռնի զոհերի հիշատակին։

Նոյեմբեր 22,- Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը ընդունեց օրենք. «Օսմանյան Թուրքիայում 1915-ի հայերի ցեղասպանության դատապարտման մասին»։

1990 թ.

Ապրիլ,- Երևանում տեղի ունեցավ միջազգային գիտաժողով նվիրված Մեծ եղեռնի 75-րդ տարելիցին։

Աշխարհի տարբեր երկրների գիտնականները իրենց ելույթներում դատապարտեցին հայերի ցեղասպանությունը։

1991 թ.

Սեպտեմբեր 2,- Հռչակվեց Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը։

Սեպտեմբեր 21,- Հռչակվեց Հայաստանի անկախ հանրապետությունը։

Հոկտեմբեր 16,- Հայաստանի Հանրապետության նախագահ ընտրվեց Լևոն Հակոբի Տեր-Պետրոսյանը։

1994 թ.

Ապրիլ,- Աշխարհի տարբեր երկրների խորհրդարաններում առանձին պետական գործիչներ և մտավորականներ իրենց ելույթներում, հարգանքի տուրք մատուցելով Մեծ եղեռնի զոհերի հիշատակին, դատապարտեցին հայերի ցեղասպանությունը։

Ապրիլ 22,- Ռուսաստանի Դաշնության Պետական դուման, քննարկելով 1915-ի հայերի ցեղասպանության հարցը, իր հայտարարության մեջ դատապարտեց Օսմանյան կայսրությունում թուրքական կառավարության կողմից գործադրված ցեղասպանությունը և իր կարեկցանքն հայտնեց

հայ ժողովրդին։

Օգոստոս,- Վախճանվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս, Հայաստանի Հանրապետության ազգային հերոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Առաջինը։

Նոյեմբեր,- Հունաստանի խորհրդարանը պաշտոնապես ճանաչեց Հայոց Մեծ եղեռնը, Ապրիլի 24-ը ընդունելով ցեղասպանության ենթարկված հայերի հիշատակի օր։

Նոյեմբեր 18,- Փարիզի ֆրանսիական 17-րդ պատժական դատարանը պատմաբան Բերնար Լուիսի դեմ հարուցված դատավճռի կապակցությամբ հաստատեց, որ 1915 թ. հայ ժողովուրդը մարդկության դեմ գործված մի ոճիրի զոհն է դարձած։

1995 թ.

Փետրվար 10,- Իր մահից 77 տարի հետո Ստամբուլի քաղաքապետարանի և կրոնական վարչության կողմից առաջին անգամ լինելով նշվեց սուլթան Աբդուլ Համիդ Բ.-ի մահվան տարեդարձը։ Նույն օրերին լրացավ նաև Սասունի, Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերի և Կ. Պոլսի հայության կոտորածի 100-ամյա տարելիցը, որին զոհ գնացին 300 000 անմեղ հայեր։

Ապրիլ 4,- Էջմիածնի Ազգային եկեղեցական ժողովում Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Սարգիսյանը։

Ապրիլ 7-8,- Լոս Անջելոսի UCLA համալսարանի հայ ժողովրդի Արդի պատմության ամբիոնի նախաձեռնությամբ տեղի ունեցավ հայերի ցեղասպանության 80-րդ տարելիցին նվիրված միջազգային գիտաժողով։

Ապրիլ 14,- Ռուսաստանի Դաշնության Պետական Դուման պաշտոնապես դատապարտեց 1915-1922 թթ. հայերի բնաջնջման կազմակերպիչներին և ապրիլի 24-ը հայտարարեց որպես հայերի ցեղասպանության հիշատակի օր։

Ապրիլ 21-23,- Երևանում տեղի ունեցավ Մեծ եղեռնի

80-ամյակին նվիրված միջազգային համաժողով։

1996 թ.

Ապրիլ 1,- Դանիել Հեճինյանի և «Ackerly» ծանուցողական ընկերության նախաձեռնությամբ Բոստոնի գլխավոր հրապարակների վրա 3 հսկա ուրվագծեր ամրացվեցին, որոնց վրա գրված էր. «Ժողովրդի մը հանդեպ գործված ոճիրը, ոճիր է մարդկության դեմ»։ «Ապրիլ 24, 1915. Թուրքերի ցեղասպանությունը հայերի նկատմամբ»։

Ապրիլ 23,- Կանադայի խորհրդարանը, մեկուկես միլիոն զոհ խլած 1915 թ. ապրիլի 24-ի հայերի ցեղասպանության 81-րդ տարելիցի առիթով և ի հիշատակ մարդկության դեմ կատարված ոճիռների՝ յուրաքանչյուր տարվա ապրիլ 20-27 հռչակեց մարդկության դեմ գործված ոճիրի հիշատակի շաբաթ։

Նոյեմբեր 11,- Լոս Անջելոսում PBS KCET հեռուստատեսային կայանը մաս առ մաս ցուցադրեց «Մեծ պատերազմը և 20-րդ դարի ձևավորումը» վավերագրական ժապավենը։ Այդ օրվա բաժինը նվիրված էր հայերի ցեղասպանության։

1997 թ.

Ապրիլ 3,- Լիբանանի Հանրապետության խորհրդարանը բանաձև ընդունեց, ապրիլ 24-ը հռչակելով հայ ժողովրդի դեմ գործադրված կոտորածների հիշատակի օր։

Ապրիլի կեսերին,- Ղըրղըզիստանի նախագահ Ասկար Ակաևը իր Երևան այցելության օրերին ծաղկեպսակ դրեց Ծիծեռնակաբերդի Մեծ եղեռնի հուշարձանին։ Իսկ մամլո ասուլիսի ընթացքում հայտարարեց, որ «1915 թ. Թուրքիայում հայերի դեմ ցեղասպանություն է գործադրվել»։

Հերթական ռմբահարման ենթարկվեց Ստամբուլի Էյուբ թաղամասում գտնվող Ս. Եղիա եկեղեցին։ Նշենք, որ մինչ այդ փետրվարի 13-ին և 15-ին ռմբահարվեց նաև նույն շրջանում գտնվող Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցին։

Ապրիլ 21,- Կալիֆորնիայի նահանգային խորհրդարանը

բանաձև ընդունեց ապրիլ 24-ը նահանգում հռչակելով «Հայերի ցեղասպանության ոգեկոչման օր»։

Ապրիլ 22,- ԱՄՆ-ի նախագահ՝ Բիլ Քլինթոնը հանդես եկավ մի հայտարարությամբ, ուր դատապարտվում է 1915-1923 թթ. Օսմանյան կայսրությունում զոհ դնացած մեկուկես միլիոն անմեղ հայերի կոտորածները։

Հայ Համազգային Ընկերակցության պատվիրակությունը Կանադայի մայրաքաղաք Օտտավայի մեջ հանդիպում ունեցավ Ազատական կուսակցության Օնթարիո նահանգի լիազոր անդամների հետ։ Ներկայացված հուշագրի մեջ շեշտվում էր, որ Կանադայի դաշնակցային խորհրդարանը պետք է ճանաչի հայերի ցեղասպանությունը։ Նշենք, որ հայերի ցեղասպանությունը առ այսօր ճանաչված և դատապարտված է Օնթարիոյի և Քեբեքի նահանգների կողմից։

Ապրիլ 23,- Վաշինգտոնի ներկայացուցիչների Տան մեջ կոնգրեսական Ֆրենկ Փալոնիի ղեկավարությամբ տեղի ունեցավ հայերի ցեղասպանության ոգեկոչման և դատապարտման ընդլայնված նիստ։

Ապրիլ 24,- Կալիֆորնիայի նահանգապետ Փիթ Վիլսոնը ցավակցական հայտարարություն հրապարակեց Մեծ եղեռնի 82-րդ տարելիցի առթիվ։

Բրյուսելում հաստատված Քյուրդիստանի աքսորական խորհրդարանի գործադիր հանձնախումբը հատուկ հայտարարությամբ դատապարտեց Թուրքիայի ցեղասպանական քաղաքականությունը այլազգիների նկատմամբ, հատկապես կանգ առնելով հայերի ցեղասպանության վրա։

Հռոմի Քահանայապետական հայկական վարժարանի մեջ տեղի ունեցավ հայերի ցեղասպանության ոգեկոչման երեկո, ուր ելույթ ունեցան Իտալիայի ակնառու քաղաքական գործիչներ, որոնք զորակցելով հայ ժողովրդին, գործնական առաջարկներ ներկայացրին Մեծ եղեռնի ճանաչման և դատապարտման խնդրում։

Ավստրալիայի Նյու Սաութ Վեյլս հայաշատ ամենամեծ նահանգի խորհրդարանը հատուկ բանաձևով միաձայն դատապարտեց 1915 թ. հայերի ցեղասպանությունը։

Ապրիլ 30,- Վաշինգտոնի Կապիտոլ Հիլի մեջ տեղի ունեցավ հայերի ցեղասպանության ոգեկոչման ձեռնարկ շուրջ 30 կոնգրեսականների, դիվանագետների, ակնառու մտավորականների և զանազան կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ։ Ելույթ ունեցող ծերակուտականներն ու Ներկայացուցիչների Տան անդամները ընդգծեցին, որ հայերի ցեղասպանությունը իր ճանաչումը պետք է գտնի Ամերիկայի և միջազգային հանրության կողմից։ Հատկապես Ջո Քենեդին ցավ հայտնեց, որ ԱՄՆ-ի կառավարությունը դեռևս չի ճանաչել հայերի ցեղասպանությունը։

Մայիս 17-18,- Լոս Անջելոսի UCLA համալսարանում տեղի ունեցավ «Հայկական Վան-Վասպուրական»ին նվիրված միջազգային գիտաժողով՝ կազմակերպությամբ Հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ՝ Պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանի։

Մայիսի վերջերին,- Կալիֆորնիայի նահանգային վարչության և ԱՄՆ-ի դաշնակցային կառավարության կողմից որոշվեց Լոս Անջելոսում Հայերի ցեղասպանության ոգեկոչման թանգարանի կառուցման վայրը։ Այն կառուցվելու է Սան Ֆերնանդո Հովտի Վեստ Հիլզ շրջանում գտնվող հողաբլուրի վրա։

Հունիս 11-13,- Մոնրեալի Քոնքորդիա համալսարանում կայացավ «Ցեղասպանության ակադեմականների ընկերակցության» Բ. համագումարը։ Ընդունված բանաձևում մատնանշվեց, որ «1915-ին Թուրքիայում տեղի ունեցած զանգվածային սպանդը ցեղասպանություն է, որը համապատասխանում է ՄԱԿ-ի Ցեղասպանության կանխարգելման և պատժի Ուխտագրի ոգուն»։

Հունիս 23,- Ստամբուլի «Հյուրիեթ» թերթը տեղեկացրեց,

որ Բեյօղլուի քաղաքապետարանը հիմնահատակ քանդել է տվել Խասգյուղի և Օգմեյդանի Զըքսալանի հայ բողոքակա-նաց եկեղեցին։

Հուլիս 14,- ՀԲԴ-ի Հայ Դատի հանձնախումբը և Թել Ավիվի հայությունը միահամուռ ըմբոստացան քաղաքային խորհրդի այն որոշման դեմ, ուր առաջարկվում էր Բեռնար Լուիսին տալ Թել Ավիվի Պատվո քաղաքացիություն։ Այդ որոշման դեմ հակադրվեցին նաև մի շարք հրյա ակադեմա-կաններ։ Նշենք, որ Բեռնար Լուիսը ձայնակցելով թուրք պատմաբաններին, ուրանում է հայերի ցեղասպանությունը։

Սեպտեմբեր,- Բուռն բողոքի և բանավեճի առիթ տվեց Նյու Յորքի Էլիզ Այլենդ թանգարանից 1915 թ. հայերի ցեղասպանության վերաբերյալ լուսանկարների վերցվելը։ Հայության ներդրած 20-օրյա թեժ պայքարից հետո նկարները վերստին տեղադրվեցին իրենց տեղերում։

Սեպտեմբերի կեսերին,- Չիկագոյի Դը Փոլ համալսա-րանի իրավագիտության պրոֆեսոր, ինչպես նաև Մարդկա-յին իրավունքների միջազգային կազմակերպության նախա-գահ՝ Մ. Բասիունի, Harvard-ի համալսարանի «Harvard human rights journal» հանդեսի մեջ լույս ընծայած հոդվածով առաջարկեց հիմնել «Միջազգային ոճիրների մնայուն դա-տարան»՝ մարդկության դեմ կատարվող ցեղասպանական արարքները դատապարտելու նպատակով։ Այս առթիվ Մ. Բասիունի իր ուշադրությունը կենտրոնացրեց 1915 թ. հայե-րի ցեղասպանության դատապարտման հարցին։

Հոկտեմբեր,- ԱՄՆ-ի ներկայացուցիչների Տան հանրա-պետական անդամ Ջիմ Ռոկանը (Կալիֆորնիա) իր պաշտոնա-կիցներին ուղղված նամակով կոչ արեց վերականգնել (H.C. Res. 55) հայերի ցեղասպանության վերաբերող բանաձևը։ Նշենք, որ հիշյալ բանաձևը կոնգրեսին է ներկայացվել դեռևս 1997 թ. մարտին, կոնգրեսմեններ Ջորջ Ռադանովիչի և Դեյվիդ Բոնիերի կողմից։

Հոկտեմբեր 4,- ՀԲԴ-յան Արևելյան Ամերիկայի հայ դատի հանձնախումբը, հայերի ցեղասպանության թուրքական ուրացումի դեմ, բողոքի ցույց կազմակերպեց Չիկագոյում, այն պանդոկի առաջ, ուր տեղի էր ունենում «Թուրք-ամերիկյան ընկերակցություններ»ի 18-րդ տարեկան համագումարը։

Հոկտեմբեր 23,- Բելգիայի Հայ Գաղութային Վարչության նախաձեռնությամբ և քաղաքապետարանի նյութական օժանդակությամբ, Բրյուսել քաղաքի հրապարակներից մեկում տեղի ունեցավ Մեծ եղեռնի զոհերին նվիրված խաչքար հուշարձանի պաշտոնական բացումը։

Հոկտեմբեր 29,- Հաշվի առնելով միջազգային հանրության և հայկական կազմակերպությունների բողոքարկումները, ԹՈՒՆԵՍԿՈ-ն բանաձև ընդունեց, որպեսզի Օսմանյան կայսրության 700-ամյակը նշվի միմիայն մշակութային բնույթ կրող միջոցառումներով։

Հոկտեմբեր 31,- Մոնրեալի քաղաքապետ Պիեռ Բուրկը արտոնեց հայերի ցեղասպանության հիշատակին նվիրված հուշարձանի կառուցումը։

Նոյեմբեր 22,- Լոս Անջելոսի UCLA համալսարանում «Պատմական Հայաստանի քաղաքներն ու նահանգները» խորագրի տակ տեղի ունեցավ միջազգային երկրորդ գիտաժողովը։ Զեկուցումները նվիրված էին պատմական Հայաստանի Տարոն, Մուշ և Բիթլիս նահանգներին։ Գիտաժողովը կազմակերպել էր համալսարանի Հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ՝ պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանը։

Դեկտեմբեր 5-13,- Բրյուսելի համալսարանի «Միջազգային հարաբերությանց ուսումնասիրման կենտրոնի» կազմակերպությամբ Աուշվից գյուղաքաղաքի մեջ տեղի ունեցավ միջազգային գիտաժողով, նվիրված հրեական ողջակիզումին, ուր քննարկման նյութ դարձավ նաև հայերի ցեղասպանությունը։

Դեկտեմբեր 12,- Ֆրանսիայի Լա Սիոտա քաղաքի հրա-

պարակներից մեկը կոչվեց 24 ապրիլ 1915 անունով։ Հուշատախտակի վրա արձանագրված է. «24 ապրիլ 1915-ի հրապարակ. հայկական ցեղասպանության զոհ դարձած 1,5 միլիոն հայ նահատակների հիշատակին, որը գործադրվեց այդ օրերի թուրք կառավարության կողմից»։

1998 թ.

Փետրվար 27,- Սումգայիթի ողբերգության տասներորդ տարելիցի առթիվ Ստեփանակերտի և Երևանի Ծիծեռնակաբերդի հուշահամալիրներում կանգնեցված զոհերի հուշարձանների առջև տեղի ունեցան սգո արարողություններ։ Աշխարհի պետություններին և բոլոր հասարակական կազմակերպություններին ուղղված միացյալ հայտարարության մեջ պահանջվում է պաշտոնապես դատապարտել Սումգայիթում, Բաքվում, Գյանջայում և Ադրբեջանի այլ քաղաքներում տեղի ունեցած հայ բնակչության կոտորածները։

Մարտ,- Թուրքական և հայկական մամուլների հաղորդագրության համաձայն, Ուրֆայի մեջ հայերի և ասորիների չորս եկեղեցիներից երեքը փոխակերպված են մզկիթի, իսկ մեկն էլ վերածված է գորգաշինության աշխատանոցի։

Մարտ 5,- Կիպրոսի խորհրդարանը դատապարտեց Թուրքիայի կողմից գրավված շրջանում գտնվող Ս. Մակարի վանքը կիպրացի թուրքերի կողմից պանդոկի վերածելու որոշումը։ Նշենք, որ 1974 թ. Թուրքիայի Կիպրոս ներխուժելու ընթացքում, թուրքական ուժերը թալանել և ավերել էին այն։

Մարտի կեսերին,- Ուրուգվայի կրթության վարչության որոշմամբ երկրորդ և երրորդ դասարանների պատմության դասագրքերում ընդգրկվեց հայերի ցեղասպանության վերաբերյալ նյութեր։ Դասագրքերում տեղ գտած նյութերի հեղինակն է Պրոֆ. Անահիտ Պալյան-Զեքմեյանը։

Մարտ 26,- ՄԱԿ-ի մոտ Կիպրոսի դեսպանը, Թուրքիայի կողմից գրավված Կիպրոսի մշակութային կոթողների ընա-

ջընջման հարցով բողոքագիր ներկայացրեց ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանին։ Բողոքագրում խոսվում է հայոց Ս. Մակար վանքի, ինչպես նաև հունական երեք եկեղեցիների մասին, որոնք վերածված են մզկիթների, իսկ մի այլ եկեղեցի օգտագործվում է որպես ախոռ։

Մարտ 27,- Բելգիայի ծերակույտը ձայների մեծամասնությամբ բանաձև ընդունեց, ուր ճանաչելով հայերի ցեղասպանությունը կոչ է անում Թուրքիային, որպեսզի ընդունի Օսմանյան կայսրության վերջին կառավարության կողմից հայերի ցեղասպանության փաստը։ Բանաձևը բարձր գնահատվեց տեղի հայ գաղութի վարչության կողմից։

Մարտի վերջին,- «Ուրուգվահայ բազմամիութենական կազմակերպությունը» ուրուգվահայության անունից նամակ հղեց ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Քոֆի Անանին, որով պահանջվում է, որպեսզի «Մարդու իրավունքների հանձնաժողով»ի 50-ամյակի առթիվ կազմակերպված հոբելյանական նիստը դատապարտի 20-րդ դարի սկզբին տեղի ունեցած հայերի ցեղասպանությունը։

Մարտ 30,- Վենետիկի քաղաքային խորհուրդը միաձայն դատապարտեց և բանաձև ընդունեց 1915 թ. հայերի ցեղասպանության մասին, արտահայտելով իր համերաշխությունը հայ ժողովրդի՝ պատմական ճշմարտության և մարդու իրավունքների պաշտպանության ուղղված իր պայքարին։

Ապրիլ 1,- «Ջորջ Վաշինգտոն» համալսարանում իր հերթական ելույթը ունեցավ Թուրքիայի դեսպան Նուզհետ Քանդեմիրը։ Համալսարանի հայ, հույն և քյուրդ ուսանողական միությունների ներկայացուցիչները իրենց տեղատարափ հարցերով նեղ վիճակի մատնեցին դեսպանին։ Հարցերը առնչվում էին հայոց ցեղասպանության թուրքական ուրացումներին, Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակման, Կիպրոսի նվաճման և քյուրդերի հալածանքներին։

Ապրիլ 3,- Հայաստանի Հանրապետությունը ցեղասպա-

նության հանցանքը կանխարգելելու և պատժելու ՄԱԿ-ի Ուխտի 50-ամյակի առթիվ հատուկ բանաձև ներկայացրեց ժնևում տեղի ունեցող ՄԱԿ-ի Մարդկային իրավունքների հանձնախմբի 54-րդ նստաշրջանին, որը մասնակից քառասուն երկրների կողմից ընդունվեց միաձայն:

Ապրիլ 10,- Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի նախագահությունը, նախագահ՝ Ֆադեյ Սարգսյանի գլխավորությամբ ստեղծեց հատուկ կազմակերպիչ հանձնաժողով, 2000 թվականին հայոց Մեծ եղեռնի 85-ամյակը ըստ պատշաճի նշելու համար:

Ապրիլ 16-18,- Փարիզի Սորբոն համալսարանում տեղի ունեցավ հայերի ցեղասպանության նվիրված միջազգային սեմինար: Այն կազմակերպվել էր ՀԲԴ-ի Ֆրանսիայի Հայ Դատի հանձնախմբի կողմից, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի հովանավորությամբ:

Ապրիլ 16,- ժնևում տեղի ունեցող ՄԱԿ-ի «Մարդկային իրավունքների հանձնախմբ»ի նիստում, Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Կարեն Նազարյանը պահանջեց, որպեսզի հայերի ցեղասպանությունը ճանաչվի միջազգային չափանիշներով: Նա բողոքարկեց նաև մարտի 31-ը ազերիների ցեղասպանության օր հայտարարելու Ադրբեջանի անհիմն որոշումը:

Ապրիլ 17,- Արևմտյան Ամերիկայի Հայ երիտասարդաց դաշնակցության կենտրոնական վարչության մի պատվիրակություն, հայերի ցեղասպանության ճանաչման վերաբերյալ Թուրքիայի կառավարության հասցեագրված հատուկ նամակը անձամբ հանձնեց Թուրքիայի Լոս Անջելոսի հյուպատոս Հայրի Հայրեթ Եալավին:

Ապրիլ 18,- ՀԲԴ-յան Արևմտյան Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը և Հայ երիտասարդաց դաշնակցությունը միասնաբար նախաձեռնեցին ԱՄՆ-ի նախագահ՝ Բիլ Քլինթոնին ուղղված նամակարշավ, որպեսզի պաշտոնապես ճա-

նաչվի հայերի ցեղասպանությունը։

Լոս անջելոսի մի շարք ենթաքաղաքներում ցուցադրվեց մի յուրահատուկ ձեռնակառք, որի վրա դրված էր մի մեծ կաթսա։ Այն մարմնավորում էր 1915-ի հայ նահատակների արյամբ պատրաստված ապուրը։ Հայերի ցեղասպանությունը դատապարտող այս ձեռնակառքի կողքերին գրված էր. «Approved by UN», «Justice is gained not given», «Turkish soup made with Armenian bones»։ Հեղինակն էր գեղանկարիչ Զարեհ Մկրտչյանը։

Ապրիլ 20,- Կալիֆորնիայի նահանգային խորհրդարանը միաձայն ընդունեց հայերի ցեղասպանությանը վերաբերող մի բանաձև, ուր ապրիլ 24-ը հռչակվում էր Կալիֆորնիայի մեջ հայերի ցեղասպանության Ոգեկոչման օր։

Ապրիլ 22,- Երևանում, Գիտությունների Ազգային Ակադեմիայի մեծ դահլիճում տեղի ունեցավ հայ ժողովրդի մեծ բարեկամ, Գերմանիայի ականավոր հասարակական գործիչ, աստվածաբան՝ Յոհան Լեփսիուսի (1858-1926) ծնունդյան 140-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով։ Յոհան Լեփսիուսը առաջինն էր, որ դատապարտեց հայերի ցեղասպանությունը և ջանք գործադրեց կանխելու հայերի կոտորածները Օսմանյան Կայսրությունում։

Վիեննայի քաղաքային պանթեոնի մեջ ամփոփված «Մուսա լեռան քառասուն օրերը» գրքի հեղինակ, ավստրիացի գրող՝ Ֆրանց Վերֆելի շիրիմից մի բուռ հող տեղափոխվեց Միծեռնակաբերդի հայոց ցեղասպանության զոհերի հուշարձանի պատի տակ։

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խորհրդարանը որդեգրեց հայերի ցեղասպանությունը դատապարտող մի բանաձև, պահանջելով, որ ՄԱԿ-ը ճանաչի և դատապարտի 1915-ին Թուրքիայի գործադրած հայերի ցեղասպանությունը։

Ապրիլ 23,- Արգենտինայի Սենատը ընդունեց բանաձև, դատապարտելով բոլոր տեսակի ցեղասպանություններն ու

զանգվածային ոչնչացումները։ Բանաձևի նախաբանում վկայակոչվում է 1915 թ. ապրիլի 24-ին սկսված ցեղասպանությունը՝ այն որակելով որպես «Թուրքերի կողմից իրականացված 20-րդ դարի առաջին ցեղասպանություն»։

Ապրիլ 24,- Լոս Անջելոսում Թուրքիայի հյուպատոսության առջև տեղի ունեցավ ՀՅԴ-յան կազմակերպած ցույցը։ 1500 հայորդիներ բողոքեցին ընդդեմ 1915-ի հայոց ցեղասպանության և պահանջեցին, որպեսզի Թուրքիան ճանաչի այն։

Սան Ֆրանցիսկոյի Դեյվիդսոն լեռան վրա գտնվող հսկա խաչի շուրջ, որը դարձավ հայության սեփականությունը, առաջին անգամ կատարվեց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված սգատոն։

Նյու Յորքի քաղաքապետարանում տեղի ունեցավ հայերի ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջոցառում։ Մի շարք ելույթներից հետո ընդունվեց հատուկ որոշում, ըստ որի ապրիլ 24-ը Նյու Յորքում պաշտոնապես հայտարարվեց Հայերի ցեղասպանության օր։

Մայիս 3,- Ալեքսանդրիա քաղաքի (Եգիպտոս) գերեզմանատանը տեղի ունեցավ Սերոբ Աղբյուրի կողակից և ազգային հերոսուհի Սոսե Մայրիկի (Սոսե Վարդանյան) աճյունները Երևան տեղափոխելու արարողությունը, որպեսզի իր վերջնական հանգրվանը գտնի Եռաբլուրի մայր հողում։

Մայիս 16,- Լոս Անջելոսի UCLA համալսարանում «Պատմական Հայաստանի քաղաքներն ու նահանգները» խորագրի տակ տեղի ունեցավ միջազգային երրորդ գիտաժողովը։ Զեկուցումները նվիրված էին պատմական Հայաստանի Խարբերդ-Ծոփք շրջանին։ Գիտաժողովը կազմակերպել էր համալսարանի Հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ՝ Պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանը։

Մայիս 18,- Ավստրալիայի Նյու Սաութ Վեյլս նահանգի խորհրդարանը պաշտոնապես ընդունեց հայերի ցեղասպանությունը, ապրիլ 24-ը հռչակելով «Հայերի ցեղասպանության

հիշատակի օր»։

Մայիս 29,- Ֆրանսիայի Հանրապետության Ազգային ժողովը պաշտոնապես ճանաչելով հայերի ցեղասպանությունը ընդունեց հետևյալ բանաձևը. «Ֆրանսիան հրապարակայնորեն ճանաչում է 1915-ի հայերի ցեղասպանությունը»։

Մայիս 29-30,- ՀԲԴ-յան Լիբանանի Հայ դատի մարմնի և Քյուրդիստանի աքսորական խորհրդարանի կազմակերպությամբ տեղի ունեցավ միջազգային գիտաժողով՝ «Թուրքիայի ծավալապաշտական քաղաքականության վտանգները» թեմայով։ Ընդունված բանաձևում շեշտվում էր. դադարեցնել քյուրդ ժողովրդի հալածանքները և արդար լուծում տալ քրդական հարցին։ Բանաձևում նշված էր նաև՝ «Պահանջել Թուրքիայից, որպեսզի պաշտոնապես ճանաչի հայերի ցեղասպանությունը, վերադարձնի գրավյալ հողերը և վնասի հատուցում կատարի հայության, որոհետև ինքը ժառանգորդն է հայերի ցեղասպանությունը գործադրած Օսմանյան կայսրության»։

Հունիս 13,- ԱՄՆ-ի Օրեգոն նահանգի Փորտլենդ քաղաքի համալսարանում, շրջանավարտների հանդիսության ընթացքում, տեղի ունեցավ հայ ուսանողների բողոքի ցույց՝ թրքական ամբիոնի ստեղծման դեմ։ Ներկա էր նաև ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնը։

Հունիս 16,- Եվրոխորհրդարանի լիագումար նիստում, ֆրանսիացի և հույն երեսփոխանները առաջարկեցին օրակարգի վրա իբրև «ստիպողական հարց» բերել նաև հայերի ցեղասպանության ճանաչման հարցը։ Ձայների մեծամասնությունը չապահովելու պատճառով, առաջարկը չընդունվեց։

Հունիս 24,- Լիբանանում իր մահկանացուն կնքեց Հայ դատի անխոնջ պաշտպան, արաբ իրավաբան Մուսա Փրենը։ Նա հայտնի էր հայերի ցեղասպանության նվիրված իր բազմաթիվ ուսումնասիրություններով։

Հունիս 25,- Շվեյցարիայի հայկական համայնքի ջանքե-

րով, սոցիալիստ պատգամավոր Ժան Ջիգլերի կազմած հատուկ բանաձևը՝ հայերի ցեղասպանության ճանաչման մասին, ներկայացվեց Շվեյցարիայի խորհրդարանի քննարկմանը։

Հունիս 30,- Պաշտոնական այցով Հայաստան ժամանեց Արգենտինայի նախագահ Կարլոս Մենեմը։ Կառավարական հանդիպումների ընթացքում նա այցելեց նաև Միջեռնակաբերդի Եղեռնի հուշահամալիրը և ծաղկեպսակ զետեղելով՝ մեկ րոպե լռությամբ հարգեց զոհերի հիշատակը։

Օգոստոս 1,- Միչիգանի (ԱՄՆ) Սաութֆիլդ շրջանի Ս. Հովհաննու եկեղեցում տեղի ունեցավ խորհրդաժողով՝ «Հայերի ցեղասպանությունը և Թուրքիայի ուրացումները» խորագրերով։ Այն կազմակերպված էր Միչիգանի համալսարանի հայկական ուսումնասիրությունների կենտրոնի կողմից։

Օգոստոս 10,- Մասաչուսետս նահանգի (ԱՄՆ) կառավարիչի պաշտոնակատար՝ Փոլ Սելուչին ստորագրեց մի օրենք, որը նախատեսում է Իռլանդիայի մեծ սովի, հայերի ցեղասպանության և հրեական ողջակիզման վերաբերյալ դասավանդություններ մտցնել նահանգի ուսումնական ծրագրի մեջ։

Օգոստոս 12,- Հայաստանի, Կիպրոսի, Բուրունդիի, Ուրուգվայի և Ռուանդայի ներկայացուցիչները ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար՝ Քոֆի Անանին հատուկ նամակ հղեցին, որպեսզի սեպտեմբեր 9-ի ՄԱԿ-ի ընդհանուր ժողովում նշվի 1948 թ. ստորագրված ցեղասպանության Ուխտի 50-ամյակը։

Օգոստոս 21,- 38-րդ անգամ Հայաստան այցելած Մեծ Բրիտանիայի խորհրդարանի Լորդերի Պալատի փոխ-խոսնակ Բարոնուհի Քարոլայն Քոքսը Երևանում կայացած մամլո ասուլիսի ընթացքում հայտարարեց, որ իր կողմից Մեծ Բրիտանիայի կառավարության առջև բարձրացվել է հայերի ցեղասպանության հարցը։

Սեպտեմբեր 25,- Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը ՄԱԿ-ի 53-րդ նստաշրջանում ելույթ ունենալով, կոչ ուղղեց միջազգային համայնքին՝

ճանաչելու հայերի ցեղասպանությունը, որպեսզի կանխվի նմանօրինակ ողբերգությունների կրկնությունը աշխարհում։

Հոկտեմբերի սկիզբ,- ԱՄՆ-ի Տեխաս նահանգի Էլ Բասո քաղաքի հրեական ողջակիզման թանգարանում, Հայկական Ազգային Ինստիտուտի նախաձեռնությամբ բացվեց 1915-1923 թթ. հայերի ցեղասպանության նվիրված մշտական բաժին, «Աշխարհը չի մոռացել» խորագրով։

Հոկտեմբեր 4,- Մոնրեալի «Մարսելեն Վիլսոն» հանրային պարտեզում տեղի ունեցավ ցեղասպանության զոհերին նվիրված հուշակոթողի բացումը։ Հուշատախտակներից մեկի վրա արձանագրված է. «1915-ի Հայոց ցեղասպանության 83-րդ տարելիցի առթիվ, որին զոհ գնացին 1,5 միլիոն հայեր, ձոնում ենք այս հուշարձանը ցեղասպանությունների բոլոր զոհերին և բոլոր քաղաքացիները հրավիրում ենք հանձնառության՝ հանուն հանդուրժողականության և ընկերային համերաշխության։ Սույն ճանաչումը համապատասխանում է մարդու իրավունքների հայտարարության ոգուն»։

Կանադայում հայերի ցեղասպանությանը նվիրված առաջին հուշարձանը կանգնեցվել է Թորոնթոյում 1984-ին։

Հոկտեմբեր 9,- Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայի «Շիլլեր» հրապարակում տեղի ունեցավ հայ ժողովրդի բարեկամ, «Մուսա լեռան քառասուն օրերը» վեպի հեղինակ՝ Ֆրանց Վերֆելի հուշարձանի բացումը։

Հոկտեմբեր 25,- «Արարատ Էսկիջյան» թանգարանի հովանավորությամբ, Լոս Անջելոսի Արարատ Տան Շին մատուրին մեջ հոգեհանգստյան պաշտոն կատարվեց, ուր հողին հանձնվեցին 1915-ի ցեղասպանության զոհ գնացած անմեղ զոհերի աճյունները. Սիրիայի Տեր-Զորի անապատից հավաքել է հայ զբոսաշրջիկների խումբը Արմեն Արոյանի գլխավորությամբ։

Նոյեմբեր 14-15,- Լոս Անջելոսի UCLA համալսարանում «Պատմական Հայաստանի քաղաքներն ու նահանգները» խո-

րագրի տակ տեղի ունեցավ միջազգային չորրորդ գիտաժողովը։ Զեկուցումները նվիրված էին պատմական Հայաստանի Կարին-Էրզրում նահանգին։ Գիտաժողովը կազմակերպել էր համալսարանի Հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ՝ Պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանը։

Դեկտեմբեր 2,- ՄԱԿ-ի Գլխավոր համաժողովի 53-րդ նստաշրջանը միաձայն ընդունեց «Ցեղասպանության կանխարգելման և պատժման Ուխտի 50-ամյակի» առթիվ Հայաստանի ներկայացրած ցեղասպանության դատապարտման բանաձևը։

Դեկտեմբեր 7,- Լոս Անջելոսի Գավառի նորընտիր Շերիֆ Լի Բաքա, իր երդումի արարողությունից հետո այցելեց Մոնթեբելլոյի հայ նահատակների հուշարձանը իր հարգանքի տուրքը մատուցելու Մեծ եղեռնի զոհերին։

Դեկտեմբեր 12,- «Հայոց ցեղասպանությունից վերապրածների բարեգործական միություն»ը հատուկ ուղերձով դիմեց Հայաստանի Հանրապետության նախագահ՝ Ռոբերտ Քոչարյանին։ Բարձր գնահատելով ՄԱԿ-ի 53-րդ նստաշրջանում հայերի ցեղասպանության դատապարտման նրա ելույթի հիմնադրույթները, վերապրողները հարց հարուցեցին, որպեսզի նախքան 20-րդ դարի ավարտը ՄԱԿ-ը հատուկ ուշադրություն դարձնի Հայ դատի արդար լուծման։

Դեկտեմբեր 28,- Լույս տեսավ գերմաներեն նոր հանրագիտարան (420 էջ) Պրոֆ. Կուննար Հայնսոնի հեղինակությամբ, ուր տարբեր ենթավերնագրերի տակ (այդ թվում՝ «Աբդուլ Համիդ», «Երիտթուրքեր», «Քյուրդեր», «Էնվեր», «Թալեաթ», «Թուրքիա», «Ռուսաստան» և այլն) մանրամասն խոսվում է հայերի ցեղասպանության մասին։ Պրոֆ. Կուննար Հայնսոն Բրեմենի համալսարանի Ռաֆայել Լեմգինի անվան ինստիտուտի տնօրենն է (Գերմանիա)։

1999 թ.

Հունվար 7,- Հենրի Մորգենթաուի գերեզմանից մի բուռ

հող վերցվեց, որպեսզի ապրիլին ամփոփվի Երևանի Ծիծեռնակաբերդի Մեծ եղեռնի զոհերին նվիրված հուշակոթողի պատի տակ։ Մեծ մարդասեր Հենրի Մորգենթաուն 1913-1917 թթ. ԱՄՆ-ի դեսպանն էր Թուրքիայում։ Նա առաջիններից մեկն էր, որ աշխարհով մեկ բողոքեց հայերի կոտորածների մասին։

Հունվար 28,- Սիյուռքահայ (ԱՄՆ) բարեգործ Սավի Թյուֆենկյանը Հայաստանի պատմության թանգարանին հանձնեց 1915-ի Վանի ինքնապաշտպանության մարտերի ձեռագիր քարտեզը։ Այս հազվագյուտ քարտեսը պատկանում էր Վանի ինքնապաշտպանության մարտերի մասնագետ Միսաք Սիմոնյանին։

Հունվար 30,- Իրանի Իսլամական խորհրդարանի նիստի ընթացքում, խորհրդարանի հայ պատգամավորներ՝ Վարդան Վարդանյանը և Արտավազդ Բաղումյանը, բողոքարկելով թուրքական խորհրդարանի մի պատվիրակության ներկայությունը, լքեցին դահլիճը։ Նրանք պատճառաբանեցին, որ թուրքական պատվիրակությունը հանդիսանում է հայ ժողովրդի նկատմամբ ցեղասպանություն գործադրած երիտթուրքերի ժառանգորդը։

Փետրվարի սկիզբ,- Հայաստանի արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը, նկատի ունենալով, որ Ադրբեջանցիները աստիճանաբար ոչնչացնում են Նախիջևանի տարածքում գտնվող հին Ջուղայի շիրմաքարերն ու խաչքարերը դիմեց ԵՈՒՆԵՍԿՈ-ի նախագահ Ֆեդերիկո Մայորին, որպեսզի կտրուկ միջոցներ ձեռնարկվեն ոչնչացումից փրկելու միջնադարյան հազվագյուտ հուշարձանները։

Փետրվար 15,- Կանադայի խորհրդարանը առանց վերջնական արդյունքի քննարկեց հայերի ցեղասպանության ճանաչման հարցը, որը օրակարգի նյութ էր դարձել Սքարբորո-Էկին-Քորտ շրջանների երեսփոխան Ջիմ Լարիկիանիսի կողմից։

Փետրվար 17,- Ջորջիա (ԱՄՆ) նահանգի ծերակույտը բանաձև ընդունեց ապրիլ 24-ը հռչակելով հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր։

Ամերիկահայ Դեմոկրատ ղեկավարության խորհրդի ներկայացուցիչները Սպիտակ Տան մեջ տեսակցեցին նախագահ՝ Բիլ Քլինթոնի հետ։ Զրույցի ընթացքում մատնանշվեց հայերի ցեղասպանության ճանաչման և Արցախի ինքնորոշման իրավունքին զորակցելու անհրաժեշտությունը։

Մարտ 1,- Կանադայում Հայաստանի դեսպան Լևոն Բարխուդարյանը, խորհրդարանում հայերի ցեղասպանության հարցը քննարկելու կապակցությամբ (տես՝ փետրվար 15), հանդիպում ունեցավ Կանադայի արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ Ջեյմս Ռայթի հետ։ Այլ հարցերի հետ դեսպանը Հայաստանի կառավարության անունից հայտնեց, որպեսզի Կանադան զորակցի հայերի ցեղասպանության միջազգային հանրության կողմից պաշտոնական ճանաչումի գործընթացին։

Մարտ 5,- Ավստրալիայի Նյու Սաութ Վեյլս նահանգի խորհրդարանի շրջաբակում տեղի ունեցավ հայերի ցեղասպանության հուշարձանի բացումը, որը կատարեց նահանգի վարչապետ Պապ Քարը։

Մարտ 10,- Կալիֆորնիայի Բըրկլիի համալսարանի հայ ուսանողական խորհուրդը հատուկ բանաձևով Ակադեմիական Ծերակույտից պահանջեց, որպեսզի թուրք դասախոս Համիդ Ալկարեն հրապարակային ներողություն խնդրի։ 1998-ի ապրիլ 24-ի Մեծ եղեռնի ոգեկոչման երեկոյին նա անարգանքի արտահայտություն էր կատարել հայ ուսանողներին, հերքելով և ուրանալով հայերի ցեղասպանությունը։

Մարտ 16,- Հայաստանում Ռումինիայի դեսպան՝ Պավել Պլատոնան ծաղկեպսակ դրեց Ծիծեռնակաբերդի Մեծ Եղեռնի հուշակոթողին։

Մարտ 23,- Հայաստանի Հանրապետությունում Գերման-

իայի դեսպան՝ Տիկ. Կարոլա Մյուլլեր Հոլդքեմփերը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին հանձնեց Գերմանիայի արտաքին գերատեսչության արխիվում պահվող 1889-1920 թթ. փաստաթղթերի և վավերագրերի մանրապատճենները, որոնք նոր լույս կսփռեն հայերի ցեղասպանության ուսումնասիրության և ճանաչման խնդրում:

Մարտ 24,- Վատիկանի թանգարանի «Սիքստինյան» սրահում բացվեց «Հայաստան-Հռոմ, 2000 տարվա հարաբերություններ» խորագրով հայ մշակույթի և պատմության ցուցահանդեսը: ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը իր բացման խոսքով առաջ քաշեց հայերի ցեղասպանության ճանաչման անհրաժեշտությունը:

Ֆրանսիայի հանրապետության Ծերակույտի նախագահական խորհուրդը որոշեց օրակարգի առաջին նիստերում չքննարկել 1998 թ. մայիսի 29-ին Ազգային ժողովի կողմից միաձայն ընդունված 1915 թ. հայերի ցեղասպանության ճանաչման վերաբերող օրինագիծը:

Ապրիլ 3,- Լոս Անջելոսի Հայ երիտասարդաց դաշնակցության կենտրոնական վարչության նախաձեռնությամբ սկսվեց հայերի ցեղասպանությունը դատապարտելու ԱՄՆ-ի նախագահ՝ Բիլ Քլինթոնին հասցեագրված քարտերի արշավ:

Ապրիլ 10,- Փարիզում տեղի ունեցավ ՄԱԿ-ի ցեղասպանության կանխարգելման և պատժումի Ուխտի վերաբերյալ մեկ օրվա հանդիպում: Հանդիպումը առնչվում էր հուլիս 17, 1998 թ. Հռոմում կայացած ՄԱԿ-ի համագումարի՝ մարդկության դեմ գործադրված ոճիրները պատժելու մնայուն ատյան ստեղծելու որոշման գաղափարի հետ:

Ապրիլ 14,- Լրացավ 1909 թ. ապրիլի սկզբին Ադանայում և Կիլիկիայի հայաբնակ վայրերում տեղի ունեցած կոտորածների 90-րդ տարելիցը: Այդ եղեռնական ողբերգությանը զոհ գնաց մոտ 30 հազար հայ, որից ավելի քան 20 հազարը՝

Աղանայի նահանգում։

Ապրիլ 23,- Հայ երիտասարդաց դաշնակցութիւնը Լոս Անջելոսի թուրքական հյուպատոսարանի առջև կազմակերպեց ցույց պահանջելով, որ Թուրքիան ճանաչի հայերի ցեղասպանութիւնը։

Ապրիլ 24,- Ֆրանսիայի Լիոն քաղաքից սկսվեց Հայոց Մեծ եղեռնին նվիրված ահազանգի մեծ քայլարշավը, որն ավարտվեց մայիսի 11-ին Փարիզի Ալֆորվիլի շրջանում։ Ճանապարհին քայլարշավին միացան հարյուրավոր հայեր և ֆրանսիացիներ։ Մասնակիցներին դիմավորեցին քաղաքապետ Ռընե Ռուքեն և այլ բարձրաստիճան պաշտոնատար անձինք։ Այնուհետև քայլարշավի մասնակիցները հոծ բազմությամբ ծաղկեպսակ զետեղեցին «Աշտարակ» հրապարակում գտնվող խաչքարին։

Մայիս 12,- Հայաստանում գտնվող Հունաստանի նախագահ Կոստանտինոս Ստեֆանոպուլոսը ծաղկեպսակ դրեց Ծիծեռնակաբերդի Մեծ եղեռնի զոհերի հուշակոթողին։

Մայիս 19,- Ծիծեռնակաբերդի Մեծ եղեռնի հուշահամալիրի մոտ առաջին անգամ պաշտոնապես նշվեց Պոնտոսի (Սև Ծովի հարավային ծովեզրյա մասը) կես միլիոն հույների ցեղասպանության օրը, մասնակցությամբ Հայաստանի հույն համայնքի և հայության ու Հայաստան-Հունաստան Ընկերության ներկայացուցիչի (հույների կոտորածը սկսվել էր 1916 թ. մայիսի 19-ին)։

Հունիս 5,- Ֆրանսիայի Գրենոբլ քաղաքի քաղաքապետարանի առջև բացվեց հայերի ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված խաչքար-հուշարձան։

Հունիս 29,- Կալիֆորնիայի նահանգապետ Կրեյ Տեյվիսը հաստատեց 1999-2000 տարեշրջանի ամավարկը, ուր ընդգրկված է նաև հայերի ցեղասպանության նվիրված վավերագրական շարժապատկերի պատրաստության (463 785 դոլար) և ցեղասպանության դասավանդման ծրագիրը ար-

դիականացնելու (99 000 դոլար) առաջարկները:

Հուլիս 16,- ԱՄՆ-ի նախագահության հանրապետական թեկնածու Էլիզաբեթ Տոլ հայտարարեց, որ «Հայերը այս դարասկզբի ցեղասպանության զոհերն են»:

Հուլիս 20,- Պաշտոնական այցով Երևանում գտնվող Ֆրանսիայի Մերակույտի նախագահ՝ Քրիստիան Փոնսլենը իր պատվիրակությամբ այցելեց և ծաղկեպսակ դրեց Ծիծեռնակաբերդի Մեծ եղեռնի հուշահամալիրին:

Օգոստոս 20,- Կալիֆորնիայի նահանգային ծերակուտական՝ Ատամ Շիֆը հատուկ նամակով իր զորակցությունը հայտնեց «Հայկական ֆիլմ» հաստատության, որպեսզի պատրաստվի հայերի ցեղասպանության վերաբերող վավերագրական շարժանկար:

Սեպտեմբեր,- Գերմանիայում բնակվող 11 247 թուրքերի ստորագրությամբ խնդրագիր ներկայացվեց Թուրքիայի Ազգային Մեծ ժողովին, որպեսզի ճանաչվի հայերի ցեղասպանությունը: Խնդրագրի պատճենները առաքվեցին նաև աշխարհի ավելի քան 20 երկրների կառավարություններին և այլ միջազգային կազմակերպություններին:

Նոյեմբեր,- Գերմանիայի Ֆրանկֆուրդ քաղաքում գտնվող «Ցեղասպանության դեմ կազմակերպության» նախագահ՝ Ալի Էրթեմը 1915 թ. հայերի կրած վնասի համար 300 դոլար նվիրեց Ծիծեռնակաբերդի Ցեղասպանության թանգարանին: Նա պարտավորվեց մինչև իր կյանքի վերջը ամսական 25 դոլար հատկացնել թանգարանին, կոչ անելով նաև, որ իր հայրենակիցները հետևեն իր օրինակին:

Նոյեմբեր 4,- Հայ դատի հանձնախումբը հրապարակեց հայերի ցեղասպանությունը ճանաչումը պահանջող մեկ միլիոն բացիկներ: Դրանք ամերիկահայերի կողմից հասցեագրվելու են ամերիկյան նախագահական ընտրությունների 5 թեկնածուներին, որպեսզի զորավիգ կանգնեն Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից հայերի ցեղասպանության ճանաչման

և դատապարտման խնդրին։

Նոյեմբեր 13-14,- Լոս Անջելոսի UCLA համալսարանում «Պատմական Հայաստանի քաղաքներն ու նահանգները» խորագրի տակ տեղի ունեցավ միջազգային գիտաժողով։ Զեկուցումները նվիրված էին Պատմական Հայաստանի Տիգրանակերտ (Դիարբեքիր) և Եդեսիա (Ուրֆա) շրջաններին։ Գիտաժողովը կազմակերպել էր համալսարանի Հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ՝ Պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանը։

Նոյեմբեր 19,- Ստամբուլում տեղի ունեցած ԵԱՀԿ-ի Գերագահմանին Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանը իր ելույթի ընթացքում մատնանշեց. «Մենք չենք կարող մոռանալ մեր ժողովրդի պատմության ողբերգական էջերը և ցեղասպանության նրա կրած ցավը»։

Նոյեմբեր 22,- Հայերի ցեղասպանությունից վերապրող 84-ամյա Մարթին Մարությանը դատական հայց ներկայացրեց New-York Life ապահովագրական ընկերության դեմ, պահանջելով 3 միլիառդ դոլարի վնասի հատուցում տալ այն հայերին, որոնք որպես Օսմանյան Կայսրության հպատակ, ապահովագրական հաշիվ ունենալով այդ ընկերության մեջ, զոհ են գնացել երիտթուրքերի կազմակերպած ցեղասպանության։ Մարթին Մարությանի իրավաբանն է Վարդգես Եղիայանը։ Հայկական ցեղասպանության այդ դատին, եղեռնից վերապրող հայցվորների թիվը աստիճանաբար շատանում է։

Նոյեմբեր 24,- Ալեքսանդրետ քաղաքի մոտակայքում գտնվող Քըրըք-Խանի Ս. Գրիգոր եկեղեցին բռնագրավվեց տեղի թուրքական իշխանությունների կողմից։

Նոյեմբեր 29,- ԱՄՆ-ի նախագահական դեմոկրատ թեկնածու Բիլ Բրեդլի New Hamphsire նահանգի Տերի քաղաքում մի հայտարարությամբ կոչ ուղղեց Թուրքիային, որ նա դադարի ուրանալ հայերի ցեղասպանությունը։ Նա պնդեց, որ Թուրքիայի ներկա կառավարությունը պետք է

ընդունի 1915-1923 թթ. հայերի նկատմամբ գործադրված տեղահանություններն ու ջարդերը:

Դեկտեմբեր,- «Հայոց ցեղասպանության այժմեականությունը» խորագրով լույս տեսավ 1998 թ. ապրիլին Հայ դատի Պաշտպանության հանձնախմբի կողմից Ֆրանսիայի Սորբոնի համալսարանում կազմակերպված հայերի ցեղասպանության նվիրված միջազգային գիտաժողովի նյութերը:

Դեկտեմբեր 1,- Բուլղարիայի Հանրապետության նախագահ՝ Պյոտր Ստոյանովը Երևան կատարած իր պաշտոնական այցելության ընթացքում ծաղկեպսակ դրեց Միծեռնակաբերդի Մեծ եղեռնի հուշարձանին: Իսկ ցեղասպանության թանգարանի մատյանում արձանագրեց. «Խոնարհվում եմ հայ ժողովրդի տառապանքի և հերոսության առջև, որ հայ ազգի պատմության հիմքն են կազմել: Հպարտ եմ, որ իմ ժողովուրդը ապաստան տվեց ու նեցուկ կանգնեց հայրենիքից վտարված հայերին և որ մեծագույն բուլղար բանաստեղծը հայ ժողովրդի մասին գրեց. «Ընդմիշտ հերոս տանջահար ժողովուրդ»:

Դեկտեմբեր 9,- Հայկական հարցերի հաստատության նախագահությունը նախաձեռնեց կազմել Մեծ եղեռնի զոհերի անվանացանկը, ինչպես նաև հայության կրած վնասների ցուցակը: Հաստատությունը դիմեց Հայաստանի և Սփյուռքի համայն հայության, որպեսզի զոհերի անունները և նրանց լքյալ գույքերի ստացականների պատճենները ուղարկվեն հետևյալ հասցեներով.

<u>Հայաստանից և ԱՊՀ-ի երկրներից ուղարկել՝</u>
Հայկական հարցերի հաստատություն
Հանրապետության փող. թիվ 30
Երևան- 375019

<u>Սփյուռքից ուղարկել՝</u>
Institut fur Armenische Fragen e. v.
Steinsdorf Str. No. 20

80538 Munchen- Germany

2000 թ.

Ստոկհոլմում տեղի ունեցավ ցեղասպանության վերաբերյալ միջազգային համաժողով 48 երկրների մասնակցությամբ: Համաժողովում չքննարկվեց 1915 թ. հայերի ցեղասպանությունը: Հայաստանի պատվիրակության հրավեր չուղարկելու պատճառով եղան բազմաթիվ բողոքներ: Հատկանշական է, որ մի շարք օտարազգի ակնառու գործիչներ իրենց ելույթներում կանգ առան և հիշեցրին հայերի ցեղասպանության մասին:

Փետրվար 9,- վիրջինիայի նահանգի (ԱՄՆ) խորհրդարանը միաձայն որդեգրեց մի բանաձև, 2000 թ. ապրիլ 24-ը հայտարարելով «1915-1923 թթ. հայերի ցեղասպանության հիշատակության օր»:

Փետրվար 16,- ԱՄՆ-ի կոնգրեսականներ Ջորջ Ռադանովիչը, Բրեդ Շերմանը և Սամվել Գեյդոնսոնը, կոնգրեսում գումարված նիստի ընթացքում Պետական քարտուղար Մադլեն Օլբրայթին հարց հարուցեցին, որպեսզի ԱՄՆ-ը ճանաչի հայերի ցեղասպանությունը:

Փետրվար 20- Ազգային հերոս զորավար Անդրանիկի աճյունը Փարիզի Փերլաշեզ գերեզմանատնից տեղափոխվեց Հայաստան և հողին հանձնվեց Երևանի եռաբլուրի բարձունքում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն գիրքը տպարան հանձնելու նախօրյակին մամուլում հաղորդումներ եղան, որ աշխարհի հայահոծ բոլոր գաղութներում, ինչպես նաև Հայաստանում նախապատրաստություններ են կատարվում Մեծ եղեռնի 85-ամյա տարելիցը ըստ պատշաճի նշելու և հարգելու 1915 թ. ամնեղ զոհերի հիշատակը:

Հայաստանում քրիստոնեության պետական կրոն

հուշակման 1700-ամյակի և հայերի ցեղասպանության 85-րդ տարելիցի առթիվ Բերիո թեմի ազգային առաջնորդարանը (Հալեպ) ապրիլի 22-27 կազմակերպելու է ուխտագնացություն դեպի Տեր-Զոր։

Մայիսին Բոստոնից (ԱՄՆ) Հայաստան է տեղափոխվելու հայտնի ռազմական և քաղաքական գործիչ Դրոյի (Դրաստամատ Կանայան) աճյունը։

Միջազգային խորհրդարաններում և այլ պաշտոնական կազմակերպություններում կրկին քննարկման նյութ դարձավ հայերի ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հարցը։ Օր. Ֆրանսիայի Մերակույտի խմբակցության կողմից նախատեսվեց մարտի 9-ին Ֆրանսիայի խորհրդարանում քննարկել հայերի ցեղասպանության վերաբերյալ բանաձևը։

ՓԱՓԱՋՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայկական հարցը և Մեծ եղեռնը
(1876-2000)

Հրատարակչության տնօրեն՝ Սոկրատ Մկրտչյան
Հրատարակչական խմբագիր՝ Մաշա Մնացականյան
Գեղ. խմբագիր և նկարիչ՝ Արա Բաղդասարյան
Սրբագրիչ՝ Վահան Բահարյան
Շապիկի համակարգչ. ձևավորումը՝ Գրիգոր Հարությունյանի
Համակարգչային շարվածքը՝ Վահան Բահարյանի

Տպագրությունը՝ օֆսեթ
Չափը՝ 60x84 1/16
Թուղթը՝ օֆսեթ 1
Ծավալը՝ 3 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 500 օրինակ
Գինը՝ պայմանագրային

«Զանգակ-97» հրատարակչություն,
Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 3, հեռ. 56-30-82:
E-mail: zangak@arminco.com.

Տպագրված է «Զանգակ-97» հրատարակչության տպարանում,
Երևան, Վարդանանց փակուղի 8, հեռ. 54-05-17: